«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

16 մարտի, 2022 թ. N 2 - Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 59-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 25–րդ հոդվածի 4-րդ մասը, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածի 4-րդ մասը և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 5.1.1 (6) կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Պալատի խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի N 59-Լ որոշման հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 2-րդ բաժնում ավելացնել նոր 2.7 և 2.8 կետերը հետևյալ խմբագրությամբ.

«2.7 Ազատում շնորհվում է Որակավորման քննությունների ծրագրի 1-ին և 3-րդ առարկաների քննություններից այն անձանց, ովքեր 2015 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածում առնվազն 3 տարի զբաղեցրել են «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքով սահմանված հանրային հատվածի կազմակերպության գլխավոր հաշվապահի և/կամ հաշվապահական ծառայության ղեկավարի, և/կամ ֆինանսական ծառայության ղեկավարի պաշտոնը և ունեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված հանրային հատվածի հաշվապահի որակավորման գործող վկայական:

2.8 Սույն Կարգով նախատեսված ազատումները չեն կարող շնորհվել անձանց, որոնց Պալատի աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի որակավորումը չեղարկվել է:»:

2. Հավելվածի 2-րդ բաժնի 2.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.1 Որակավորման քննությունների ծրագրի որոշակի առարկաների քննություններից ազատվում են Կարգի 2.2, 2.4, 2.5, 2.6 և 2.7 կետերում նշված անձինք:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցվելուց և Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ